№ 223 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 1878 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 № 223

ՏՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքեր.— Ներքին տեսութիւն։ Նինա Անդրիեվսկու սպանման գործը։ Նամակ Սուրմից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր.— Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։—«Մշակի» հեռագիրներ.— Յայտարարութիւններ.— Բանասիրական։ Նամակ Գերմանիայից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Ամենքին յայտնի է, թէ որքան բարեկամական էին Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնների յարաբերութիւնները վերջին արևելեան պատերազմի ժամանակ, թէ ինչպէս Ֆրանսիան համակրում էր Անգլիայի քաղաքականութեանը Բերլինում եղած կոնգրէսի ժամանակ։ Այն ժամանակից, երբ անգլիական կառավարութիւնը Թիւրքիայից մի քանի զիջումներ պահանջեց նոր փոխառութիւնը ապահովելու պայմանով, Անգլիայի և Ֆրանսիայի մէջ յարաբերութիւնները բաւական սառել են։

Ինչպէս երևում է արտաքին մամլից ստացված լուրերից Ֆրանսիական լրագիրներից մի քանիսը միայն պաշտպանում են արտաքին գործերի մինիստր Վադդինգտոնի քաղաքականութիւնը Անգլիայի վերաբերութեամբ, իսկ մեծ մասը՝ թէ հանրապետական և թէ միապետական ուղղութեան պախարակում են մինիստրի քաղաքականութիւնը։ Անբաւականութիւնը մինիստրի դէմ մինչև այն աստիճան մեծ է, որ լրագիրներից մի քանիսը յիշեցնում են Վադդինգտոնին իր անգլիական ծագումը։ Անգլիայի պահանջած վերջին զիջումները Թիւրքիայից հակառակ են Ֆրանսիական շահերին։ Լրագիրները յիշեցնում են Ֆրանսիական կառավարութեանը, որ իրանց շահերին վնաս է, եթէ կառավարութիւնը Անգլիայի հետ համաձայն կը գործէ արևելեան խնդրի վերաբերութեամբ։

Քաղաքական հեռագիրները հաղորդում են, որ անգլիական զօրքերը ամեն օր մի նոր աջողութիւն են ունենում Աֆգանիստանում։ Վերջին Ջէլալաբադ և քայլ առ քայլ մօտենում են Կաբուլին, որտեղից հեռագրական լուրերի համեմատ էմիրը փախել է, թողնելով երկրի կառավարութիւնը իր որդի Յակուբ-խանին, որին նա ասատիկ ատում է։ Աֆգանիստանի մի բաժնի բնակիչներին արդէն պաշտօնապէս յայտնած է որ նորա այլ և այլ էմիրի հպատակներ չեն, այլ Հնդկաստանի կայսրուհուն պէտք է ճանաչեն իրանց վրա իշխող։

Ռուսաց կառավարութիւնը յայտնեց պետութիւններին, որ նա յետ է կանչում իր դեսպանութիւնը Կաբուլից։ Մի կողմից այդ տեղեկութիւնը միւս կողմից և այն համաձայնութիւնը, որ կայացել է անգլիական և ռուսաց կառավարութիւնների մէջ՝ ազատ գործողութիւնների իրաւունք տալ Անգլիային Աֆգանիստանի, իսկ Ռուսաստանին արևելեան խնդիրների վերաբերութեամբ, յոյս են տալիս, որ Աֆգանիստանի և Անգլիայի մէջ եղած պատերազմը շուտով կը վերջանայ։

Թիւրքաց կառավարութիւնը այժմ գլխաւորապէս զբաղված է փոխառութեան հարցով։ Իր ցանկացած գումարը ստանալու համար նա պատրաստ է ամեն տեսակ զիջումներ անելու։ Յայտնի է թէ ինչպէս հակառակ էր Ռ. Դուռը Յունաստանի սահմանները ուղղելուն։ Այժմ կառավարութիւնը այդ հարցով է զբաղված և բանակցութիւնները երկու պետութիւնների մէջ սկված են։ Թիւրքիայի առաջարկած սահմանը արդէն յայտնի է այս անցեալ շաբաթվայ հեռագրից։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԻԵՎՍԿՈՒ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Սպասավիչի ճառի շարունակութիւնը։ Պաշտպանը հետևեալ կերպով նկարագրում է Նինա Անդրիեվսկու բնաւորութիւնը։ Մենք մեր առաջ տեսնում ենք կեանքով և ոյժով լի մի կնոջ պատկեր, որին դեռ վիճակված էր երկար և բաղդաւոր կեանք։ Թէև վրացուհի մոր կողմից, նա իր բնաւորութեամբ, իր ուղեղի կազմակերպութեամբ բուն ռուս կին էր, այդ բառի լաւ նշանակութեամբ, ամեն բան ինքն հեռազօտող, վճռողական բնաւորութիւններով, այստեղ և այնտեղ է վազում. այստեղ մի շոր է առնում իր կամ իր ընտանիքի այս և այն անդամի համար, այնտեղ քաղցրեղէններ է գնում, մի երրորդ տեղ խաղալիքներ է նայում իր փոքր երեխաների համար, յետոյ գոյնզգոյն մօտեր, ժապավէններ, կեղծ ոսկեայ և արծաթեայ թելեր է առնում և այս բոլոր մի «ծննդեան ծառ» զարդարելու համար, իր տնային շրջանը ուրախացնելու և ինքն ուրախանալու համար։ Եւ քաղաքի կերպարանքն էլ ասես բոլորովին փոխվում է՝ ամեն փողոցներում կը տեսնէք գիւղից եկած մարդիկ «ծննդեան ծառեր» ծախելիս, խումբ խումբ ժողովուրդ այս կողմ և այն կողմ վազելիս, իբր թէ նրանք չափազանց նշանաւոր մի գործի են գնում, շտապում են որ ժամանակին այս ինչ տեղ հասնեն։ Կը մտնէք մի խանութ—դա էլ իր կերպարանքը փոխել է, աւելի փայլուն է, աւելի զարդարված է և այդ տօնային կերպարանքը ամեն տեղ կը տեսնէք. գրավաճառի մօտ միայն սիրուն և փայլուն կազմերով գրքեր կը տեսնէք դրած սեղանի և պատուհանի վրա, շոր կարողի մօտ աւելի գեղեցիկ և թարմ, աւելի գոյնաւոր, աչքի ընկնող շորեր են դասվում պատուհանի մէջ։ Մտէք ձեր գրավաճառի մօտ և հարցրէք՝ «ինչ նոր գիրք է դուրս եկել» և նա ձեզ անկասկած կը տայ մի որ և իցէ չքեղակազմ նորութիւն «ծննդեան» գրականութիւնից. իսկ եթէ ասէք, թէ այս տեսակ բաների համար չէք հետաքրքրվում, այլ հարցնում էք մի գիրք, որ վերաբերվում է այն ճիւղին, որից միշտ առնում էք, դուք անպատճառ կը նկատէք զարմանք նրա երեսի վրա և նա իսկոյն կը պատասխանի՝ «տօների մօտենալուն ոչինչ նորութիւն չէ հրատարակվում բացի «ծննդեան» գրականութեան պատկանող հեղինակութիւններից». և կաւելացնի՝ «բայց եթէ մի ընծայ ուզում էք անել մենք շատ յարմար գրքեր կարող ենք առաջարկել»։ Նոյն զարմանքով կը նայեն ձեզ վրա մի շոր կարողի մօտ, եթէ մտնէք և մի հասարակ շոր պահանջէք. «Մի՞թէ, կասեն ձեզ, տօների համար մի նոր շոր կարել չէք տալիս. գուցէ ձեզ հարկաւոր է մի ֆրակ....» կը մտնէք սափրիչի մօտ, որովհետև վաղուց մազերը կտրել չէք տուել և նա իսկոյն ձեզ կառաջարկի զանազան անուշահոտութիւններ գեղեցիկ շիշերի մէջ և փայլուն ժապավէններով զարդարած և կասի ձեզ՝ «Զէք հրամայի շատ նուրբ անուշահոտութիւններ «ծննդեան ծառի» համար. դա ամենասիրուն ընծայ է, որ կարող էք անել մի ջահել տիկնոջ կամ օրիորդին»։ Կը մտնէք թղթավաճառի մօտ, որովհետև ձեր թուղթը հատել է, իսկ այսօր շատ նամակներ ունէք գրելու և անկասկած կը լսէք՝ «Մենք շատ գեղեցիկ նորութիւններ ենք ստացել «ծննդեան ծառի» համար, չէք հրամայի նամակի գոյնզգոյն թղթեր սկզբնական տառերով կամ զինանշաններով. կամ գուցէ մի գեղեցիկ թանաքաման բոլորովին նոր ձևի կամ...» բայց դուք ընդմիջում էք դրան և ասում էք՝ «Շնորհակալ եմ, ես ձեզ կը խնդրէի որ տաք ինձ նամակի այն թղթից որ միշտ առնում եմ ձեզ մօտ»։ Եւ կը տեսնէք իսկոյն նմանապէս զարմանք թղթավաճառի երեսի վրա... Մի խօսքով ուր և գնաք, ուր և մտնէք, ամեն տեղ սպասում են որ դուք «ծննդեան ծառի» մասին էք մտածում և ձեր գնալն էլ, գալն էլ, ձեր մտածմունքն էլ, գործելն էլ միայն «ծննդեան ծառի» համար է. ամենք կարծում են, որ տօների մօտենալուն պէս դուք դադարում էք կամ պէտք է դադարէիք նոյն կերպ հագնվել ինչպէս առաջ, նոյն կերպ զբաղվել այն հարցերով որք ձեզ առաջ էլ հետաքրքրում էին, նոյն տեսակի գրքեր կարդալ, մինչև անգամ նոյն թղթի վրա և նոյն թանաքով կամ նոյն թանաքամանից գրել։ Տօնի ժամանակ պէտք է քաղցրեղէններ ուտել, եթէ էլ քաղցրեղէն չէք սիրում, պէտք է անուշահոտութիւններ գործածել, թէև նրանցից ձեր գլուխը կը ցաւի, մի խօսքով պէտք է անել ինչ որ ուրիշներ են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Բերլին. 23 դեկտ. 78

Ինչպէս յայտնի է, ամբողջ Եւրոպա Քրիստոսի Ծննդեան տօնում է դեկտեմբերի 25-ին։ Այդ տօնը, որ սկզբնաբար մի եկեղեցական տօն էր միայն, դարձել է գլխաւորապէս մի ժողովրդական տօն։ Ամեն մարդ չէ յիշում այդ օրվայ սկզբնական և բուն նշանակութիւնը, ամեն մարդ չէ պատրաստվում 25-ին դեկտեմբերի կամ նախընթաց երեկոյ եկեղեցի գնալու և իր աղօթք ասելու դէպի նա, որ ծնվել է այդ օրը և պէտք է մի օր մի նոր բարոյական սկզբունք քարոզէր մարդկութեանը, մի նոր կրօն, մի նոր օրէնք կանգնեցնէր, որ հիմնովի չարչարվելուց յետոյ և նորա հետևողների դարևոր հալածանքներից յետոյ, պիտի նոր լոյս ծագեցնէր ընդհանուր մարդկութեան համար, որ և օգնեց քաղաքակրթութեան առաջադիմութեանը և հասարակութեան նոր կազմակերպութեան հիմնվելուն։ Սա և դորա պէս մտքերը հեռու են այժմ ամեն մէկից ով որ պատրաստվում է տօնել 25 դեկտեմբերի. նորան հետաքրքրում է ոչ թէ այդ տօնի ծագումը, այլ նոյն ինքն տօն օրը։ Ամեն մի աշխատող—իսկ այդ անունը կրում է գրեթէ ամեն մի անձն Եւրոպայում—ուրախ է որ մօտենում է տօնը, որովհետև նա տարվայ մէջ միայն երկու կամ երեք անգամ առիթ ունի մի քանի օր մոռանալ աշխատանքը և վայելել իր աշխատածի արդիւնքը։ Միայն զատիկը, պենտէկոստէն և Քրիստոսի ծնունդը այնպիսի տօներ են, որ մի օրով չեն վերջանում, այլ երեք օրվայ տօն են։ Եւ ինչի համար պիտի մտածէր ամեն մարդ թէ ինչ է տօնի բուն նշանակութիւնը՝ նախորդները պատերազմեցին, գուցէ նահատակվեցան մի գաղափարի, մի բարոյական սկզբունքի համար, բայց նրանց պատերազմը և նահատակութիւնը ապարդիւն չը մնացին, յաջորդները վայելում են այժմ նրանց գործունէութեան պտուղները, ապրում են աւելի կանոնաւորված հասարակական պայմանների մէջ, բայց իրանք էլ պատերազմում են այլ, աւելի նոր գաղափարների համար, որոնց իրագործութիւնը կը լինի մի ժամանակ և որոնք այժմ ապրող սերունդի յաջորդներին նոյնքան ինքն ըստ ինքեան հասկանալի և անհրաժեշտ կերևան, ինչպէս մեզ այժմ երևում են հասկանալի և անհերքելի ճշմարտութիւն այն, որի համար մի քանի դար առաջ ամբողջ հասարակութիւններ, կուսակցութիւններ և ազգեր անդամ կռւում էին իրար հետ... Այսպէս անցնում են դարեր մէկ միւսից յետոյ և ամենքն էլ բերում են իրանց հետ նոր ճշմարտութիւններ, նոր կատարելագործութիւններ, նոր արդիւնքներ և նրանց վրա է հիմնվում անդադար առաջադիմութիւն...

Բայց վերադառնանք դեկտեմբերի 25-ի տօնին։ Այդ տօնը այնպէս չէ կատարվում ինչպէս լինում է շատ անգամ որ մարդս ինքն իր համար մի տօն օր է անում. օրինակ մինը շատ աշխատել է, կամ չէ իմանում ինչպէս ազատվի տխուր տրամադրութիւնից, ինքն իրան ասում է՝ «կ՚ցրվեմ, երթամ ծանօթների մօտ, կամ թատրոն, կամ երաժշտութիւն լսեմ, ուրախ ժամանակ անցկացնեմ»։ Ոչ, 25 դեկտեմբերի համար այդպէս յանկարծակի չեն պատրաստվում, այլ ընդհակառակ շաբաթներով առաջ կը տեսնէք, որ ամբողջ ժողովուրդը զբաղված է պատրաստութիւններով, այստեղ և այնտեղ է վազում. այստեղ մի շոր է առնում իր կամ իր ընտանիքի այս և այն անդամի համար, այնտեղ քաղցրեղէններ է գնում, մի երրորդ տեղ խաղալիքներ է նայում իր փոքր երեխաների համար, յետոյ գոյնզգոյն մօտեր, ժապավէններ, կեղծ ոսկեայ և արծաթեայ թելեր է առնում և այս բոլոր մի «ծննդեան ծառ» զարդարելու համար, իր տնային շրջանը ուրախացնելու և ինքն ուրախանալու համար։ Եւ քաղաքի կերպարանքն էլ ասես բոլորովին փոխվում է՝ ամեն փողոցներում կը տեսնէք գիւղից եկած մարդիկ «ծննդեան ծառեր» ծախելիս, խումբ խումբ ժողովուրդ այս կողմ և այն կողմ վազելիս, իբր թէ նրանք չափազանց նշանաւոր մի գործի են գնում, շտապում են որ ժամանակին այս ինչ տեղ հասնեն։ Կը մտնէք մի խանութ—դա էլ իր կերպարանքը փոխել է, աւելի փայլուն է, աւելի զարդարված է և այդ տօնային կերպարանքը ամեն տեղ կը տեսնէք. գրավաճառի մօտ միայն սիրուն և փայլուն կազմերով գրքեր կը տեսնէք դրած սեղանի և պատուհանի վրա, շոր կարողի մօտ աւելի գեղեցիկ և թարմ, աւելի գոյնաւոր, աչքի ընկնող շորեր են դասվում պատուհանի մէջ։ Մտէք ձեր գրավաճառի մօտ և հարցրէք՝ «ինչ նոր գիրք է դուրս եկել» և նա ձեզ անկասկած կը տայ մի որ և իցէ չքեղակազմ նորութիւն «ծննդեան» գրականութիւնից. իսկ եթէ ասէք, թէ այս տեսակ բաների համար չէք հետաքրքրվում, այլ հարցնում էք մի գիրք, որ վերաբերվում է այն ճիւղին, որից միշտ առնում էք, դուք անպատճառ կը նկատէք զարմանք նրա երեսի վրա և նա իսկոյն կը պատասխանի՝ «տօների մօտենալուն ոչինչ նորութիւն չէ հրատարակվում բացի «ծննդեան» գրականութեան պատկանող հեղինակութիւններից». և կաւելացնի՝ «բայց եթէ մի ընծայ ուզում էք անել մենք շատ յարմար գրքեր կարող ենք առաջարկել»։ Նոյն զարմանքով կը նայեն ձեզ վրա մի շոր կարողի մօտ, եթէ մտնէք և մի հասարակ շոր պահանջէք. «Մի՞թէ, կասեն ձեզ, տօների համար մի նոր շոր կարել չէք տալիս. գուցէ ձեզ հարկաւոր է մի ֆրակ....» կը մտնէք սափրիչի մօտ, որովհետև վաղուց մազերը կտրել չէք տուել և նա իսկոյն ձեզ կառաջարկի զանազան անուշահոտութիւններ գեղեցիկ շիշերի մէջ և փայլուն ժապավէններով զարդարած և կասի ձեզ՝ «Զէք հրամայի շատ նուրբ անուշահոտութիւններ «ծննդեան ծառի» համար. դա ամենասիրուն ընծայ է, որ կարող էք անել մի ջահել տիկնոջ կամ օրիորդին»։ Կը մտնէք թղթավաճառի մօտ, որովհետև ձեր թուղթը հատել է, իսկ այսօր շատ նամակներ ունէք գրելու և անկասկած կը լսէք՝ «Մենք շատ գեղեցիկ նորութիւններ ենք ստացել «ծննդեան ծառի» համար, չէք հրամայի նամակի գոյնզգոյն թղթեր սկզբնական տառերով կամ զինանշաններով. կամ գուցէ մի գեղեցիկ թանաքաման բոլորովին նոր ձևի կամ...» բայց դուք ընդմիջում էք դրան և ասում էք՝ «Շնորհակալ եմ, ես ձեզ կը խնդրէի որ տաք ինձ նամակի այն թղթից որ միշտ առնում եմ ձեզ մօտ»։ Եւ կը տեսնէք իսկոյն նմանապէս զարմանք թղթավաճառի երեսի վրա... Մի խօսքով ուր և գնաք, ուր և մտնէք, ամեն տեղ սպասում են որ դուք «ծննդեան ծառի» մասին էք մտածում և ձեր գնալն էլ, գալն էլ, ձեր մտածմունքն էլ, գործելն էլ միայն «ծննդեան ծառի» համար է. ամենք կարծում են, որ տօների մօտենալուն պէս դուք դադարում էք կամ պէտք է դադարէիք նոյն կերպ հագնվել ինչպէս առաջ, նոյն կերպ զբաղվել այն հարցերով որք ձեզ առաջ էլ հետաքրքրում էին, նոյն տեսակի գրքեր կարդալ, մինչև անգամ նոյն թղթի վրա և նոյն թանաքով կամ նոյն թանաքամանից գրել։ Տօնի ժամանակ պէտք է քաղցրեղէններ ուտել, եթէ էլ քաղցրեղէն չէք սիրում, պէտք է անուշահոտութիւններ գործածել, թէև նրանցից ձեր գլուխը կը ցաւի, մի խօսքով պէտք է անել ինչ որ ուրիշներ են

լութիւն։ Նա ասում էր իշխ. Անչարաձէին՝ «Ես ռուս կին եմ, ես սիրում ես որ ամեն բան պարզ կատարվէր։» Դա ռուս կին էր նոր սերունդի՝ ուրախ, շնորհալի, համարձակ, լայն, անսահման մտաւոր հորիզոնով։ Նա սիրում էր Բօկլին, կարդում էր Դարվինին և Հեկելին, ծանօթ էր բժշկութեան հետ։ Նա հետաքրքրվում էր կանանց հարցով, երազում էր ճանապարհորդել, դօկտորական աստիճանը ստանալ, խօսում էր կրակօտ, յափշտակված կերպով, հագնվում էր հասարակ, մինչև անգամ անհոգ կերպով, ազամարդիկների հետ շատ մտերիմ էր, համարձակ էր։ Նա ոչինչից չէր վախենում և ասում էր որ պառաւ կանայք միայն կարող են վախկոտ լինել։ Տան մէջ նա տէր էր, ամեն բան նրա կամքով էր կատարվում, մայրը նրան ենթարկվում էր։ Մի և նոյն ժամանակ այդ գրեթէ արական յատկութիւնների հետ նրան պակաս էր բոլորովին սեռական զգացողութիւնը։ Նա երկրորդ Դիանա էր, նա երկրորդ Կարլոս XII-որդն էր։ Նա ամեն տեսակ ռոմանտիզմից հեռու էր, ասում է Շերվաշիձէ։ Նա երբէք չէր հասկանում ինչ բան է սէրը, նա ծիծաղում էր, երբ խօսում էին սիրոյ վրա։ Նա իր տան մէջ ասում էր որ երբէք չի պակվի։ Այդ տեսակ բնաւորութեան հետ դժուար էր ճշմարիտ նրան մարդու գնալ։ Այդ կուսական յատկութիւնների հետ միացած ընդարձակ խելքը միշտ արգելք կը լինէր նրա համար գտնել մի մարդ, որի գերազանցութիւնը նա խոստովանէր։ Հազիւ թէ կարող էր գտնվել մի մարդ որ նրա հատը լինէր։ Այդ տեսակ մարդուն պէտք է պտուտին լապտերով։

Այդտեղ պաշտպանը շատ երկար և մանրամասնաբար սկսում է պատմել ինչպէս է կատարվել կայքերի բաժանելը, ինչ խելք և բնաւորութեան զօրութիւն է ցոյց տուել այդ գործում հանդուցեալը, պատմում է վերջապէս, ինչպէս օրիորդը իր մօր հետ եկաւ Թիֆլիս, ինչպէս ապրում էր առաջ հիւրանոցում, յետոյ Շերվաշիձէի տանը և վերջացնում է ներկայացնելով մի մանրամասն պատկեր յուլիսի 22-ին պատահած անցքի, ինչպէս օրիորդը գնաց լողանալու, ինչպէս խեղդվեցաւ ջրի մէջ, ինչպէս նրա անհետանալուց յետոյ նրան որոնում էին և վերջացնում է նորանով, որ ամբողջ անցքի մէջ չը կայ ոչինչ գաղտնի, ոչինչ մութ կամ անհասկանալի։ Օրիորդը իր ինքնակամ բնաւորութեան նայելով, կարող էր գնալ լողանալու գետի մէջ, բայց պատահմամբ խեղդվեցաւ։ Ահա ամբողջ գաղտնիքը։

Ճառի մնացած մասը նուիրված է այն դատողութեանը թէ ամեն պատմական գործերում, ուրեմն և դատաստանական գործում իրողութիւնները պէտք է զգուշութեամբ բաժանել լէգենդներից։ Գործի մէջ, պաշտպանի ասածով, կան այնպիսի տարրեր, որոնց, որպէս անպէտք նիւթ, պէտք է կապարելապէս դէն գցել։ Եթէ մի բաժակ թէյի մէջ խառնած կը լինի թանաքի մի դդալ, ամբողջ թէյը փչացած կը լինի։ Եթէ մի մարդ դար ու խնդրէր ինձ ընդունել մի տաս րուբլանոց կեղծ թղթադրամ և ես չէի ուզենայ նրան ընդունել, ինչ կասէիք, եթէ այն մարդը խոստովանվելով որ դրամը կեղծ է, սկսէր համոզել և խնդրել որ ընդունեմ այդ թղթադրամը գոնէ կիսով չափ պակաս գնով, գոնէ հինգ րուբլիով։ Ոչ, եթէ թղթադրամը կեղծ է, նա կատարելապէս կեղծ է, նրան պէտք է ոչնչացնել, այրել. տաս րուբլանոց թուղթը կեղծ լինելով չէ կարող հինգ րուբլու արժողութեամբ ընդունվել։ Եթէ մի ցուցումն կեղծ է, նա կատարելապէս կեղծ է, նա չէ կարող ճշմարտութեան մի մաս պարունակել իր մէջ։

Պաշտպանը երկար պատմում է բոլոր զեղծումները, որոնք թէ պօլիցիական և թէ դատաստանական վարչութեան կողմից կատարվեցան գործի նախնական քննութեան ժամանակ։

Պաշտպանը վերջացնում է իր ճառը նկարչական կերպով։ Նա օրինակ է բերում մի մաքուր ջուր, որի մէջ կան անմաքրութիւններ։ Անմաքրութիւններից պէտք է ազատել ջուրը։ Ջուրը այնքան ապականված է, որ նրան մաքրելու համար հարկաւոր է նրան մի մեքենայական գործողութեան, ֆիլտրի մէջ խտակելուն, իսկ գուցէ և գոլորշիացնելուն ենթարկել։

Պաշտպանը յոյս ունի որ դատարանը կը կատարէ այդ դժուար, այդ մեծ աշխատանքը քննվող գործի վերաբերութեամբ։ Պաշտպանը հաւատացած է մեղադրվածների անմեղութեան մէջ։

Նոյն օրը պաշտպանին կրկին պատասխանում է պրոկուրորը, կրկնելով կարճ կերպով իր մեղադրական ճառի մէջ յայտնած մտքերը։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՑ

4 դեկտեմբերի

Երբեմն այսպիսի խուլ տեղերում, այնպիսի իրողութիւններ, անային յեղափոխութիւններ են պատահում, որ լռել, անտարբեր մնալ, անկարելի է։ Ընդունելով գաւառական թղթակցի համեստ պաշտօնը, իմ պարտաւորութիւնս է հաղորդել ձեզ այնպիսի տեղեկութիւններ և իրողութիւններ, որոնց իսկութեան պատասխանատուութիւնը ես եմ ընդունում և որոնց ճիշդ լինելու մասին ես հաւատի եմ։ Այս պատճառով իմ հաղորդած տեղեկութիւնների աղբիւրը պիտի լինեմ կամ ես ինքս, որպէս ականատես, գործող կամ մասնակցող յայտնի իրողութիւնների և կամ այնպիսի անձինք, — որոնց ես նոյնքան երաշխաւոր եմ համարում, որքան ինձ։ Ամբոխի բերանին այստեղ այնքան հաւատ ընծայել անկարելի է — նա նոյնքան փոփոխական է, որքան աշնան եղանակը։ Շատերը մեր գլխին քարոզներ են կարդում որ մենք լռենք, չասենք, չը խօսենք, չաշկարացնենք սև գործերը, երևան չը հանենք մի քանի գործող մարդերի մութ կողմերը.... բայց ի զուր, մենք նոյնքան մղելու ենք մեր պատերազմը նրանց դէմ, որքան տևելու է նրանց գոյութիւնը...

Լռեցնել թղթակիցներին նշանակում է—լրագրութեան թևերը կտրատել. լրագրութիւնը առանց գաւառական թղթակիցների, նոյն է թռչուն առանց թևերի. լրագրութեան գործիքները թղթակիցներն են.

Այս ամսին Սուրամում կատարվեցաւ երևելի յեղափոխութիւն.—մեր 23 տարվայ երեսփոխանը հեռացրած է պաշտօնից. նա որ պարծենում էր թէ մինչև մահը ոչ ոք իրաւունք չունէ իրան պաշտօնից հեռացնել, այսօր (4-ին) բոլոր հասարակութիւնը հաւաքած եկեղեցու գաւթում, միաձայն անպատուութեամբ հրաժարացրեց մեր երեսփոխանին, ապարդիւն համարելով նրա 23 տարվայ եկեղեցական ծառայութիւնը։

Սարսափելի էր ժողովուրդի յուզմունքը, նա այնպէս էր կատաղած որ եթէ պ. թեմական վերատեսչի ներկայութեան պատիւը չը լինէր, խեղճին կատարեալ զզզելու էին.... Զարմանալին այն էր որ այնքան բազմութեան մէջ մէկը չը կար որ նրա կողմը պահէր, նրա լաւն ասէր։ Բոլորը մեղադրում էին եկեղեցական գումարների անհետանալու մէջ...

Շարունակ 23 տարի է այս մարդը ժողովրդին մի կոպէկ հաշիւ չէ ցոյց տուել. ժողովուրդը փախչում էր մի կոպէկ նուիրելուց. եկեղեցին և ուսումնարանը նիւթապէս չէին ապահովվում.... ժողովուրդը պահանջում է իսկոյն երեք հաշուառներ ընտրել, որ անցած տարիների բոլոր հաշիւները առնեն, որովհետև իրանց յայտնի է, որ երեսփոխանի ձեռին այս րոպէիս պէտք է լինի առ ձեռն 5000 րուբլ զուտ փող, բայց պ. երեսփոխանը, ոչ թէ միայն հրաժարվեցաւ հաշիւ տալուց, այլ մինչև անգամ համարձակվում էր պնդել, թէ իրան փոխել ոչ ոք չէ կարող և թէ իր հաշուով ժողովուրդն է պարտական մնում 600 րուբլ.... Զարմանալի հաշիւ. ժողովրդի փողերն են նրա գրպանում հաւաքվում և էլի ժողովուրդն է նրան պարտ մնում... Եւ երբ այս բոլոր հաշիւների մասին մանրամասն տեղեկութիւններ էինք հաղորդել ձեր լրագրի միջոցով, և տնօրէնութիւն խնդրել ժողովուրդի ցանկութիւնը կատարելու.—մենք վիճակային իշխանութեան կողմից ստացանք կատարեալ լռութիւն, իսկ տեղիս աւագ քահանայ Տէր Յովսէփ Առիւծեանի որդու կողմից, որ Ներսիսեան դպրոցի ե. դասատան մէջն է, կատարեալ հայոյանք և զրպարտութիւն, տեղական միւս հայ լրագրի մէջ, գուցէ մեզ վնասելու մտքով.....Մենք այն ժամանակ լռեցինք, նշանակութիւն չը տալով երիտասարդի զրպարտութիւններին, որովհետև այդ մանուկը գրել էր ոչ իր սեփական համոզմունքով, այլ թելադրված անգիտակցաբար։ Նա պաշտպանում, գովում էր այն երեսփոխանին, որին Սուրամի հայ հասարակութիւնը անհաւատարիմ գտնելով, անպատուութեամբ հեռացրեց, անօգուտ և ապարդիւն համարելով նրա 23 տարվայ գործունէութիւնը.... Երիտասարդի այդ տեսակ վարվունքի համար մենք միայն ցաւում ենք. բայց էլի պատասխանում ենք հետևեալ ժողովրդական առածով. «Ասում են տանուտէրի վրա լոյս իջաւ,—ով տեսաւ.—թէ գլխը...»

Նոյն օրը, ամսիս 4-ին, պ. թեմական վերատեսչի ներկայութեան պատիւը չը լինէր, խեղճին կատարեալ զզզելու էին.... Զարմանալին այն էր որ այնքան բազմութեան մէջ մէկը չը կար որ նրա կողմը պահէր, նրա լաւն ասէր։ Բոլորը մեղադրում էին եկեղեցական գումարների անհետանալու մէջ...

Շարունակ 23 տարի է այս մարդը ժողովրդին մի կոպէկ հաշիւ չէ ցոյց տուել. ժողովուրդը փախչում էր մի կոպէկ նուիրելուց. եկեղեցին և ուսումնարանը նիւթապէս չէին ապահովվում.... ժողովուրդը պահանջում է իսկոյն երեք հաշուառներ ընտրել, որ անցած տարիների բոլոր հաշիւները առնեն, որովհետև իրանց յայտնի է, որ երեսփոխանի ձեռին այս րոպէիս պէտք է լինի առ ձեռն 5000 րուբլ զուտ փող, բայց պ. երեսփոխանը, ոչ թէ միայն հրաժարվեցաւ հաշիւ տալուց, այլ մինչև անգամ համարձակվում էր պնդել, թէ իրան փոխել ոչ ոք չէ կարող և թէ իր հաշուով ժողովուրդն է պարտական մնում 600 րուբլ.... Զարմանալի հաշիւ. ժողովրդի փողերն են նրա գրպանում հաւաքվում և էլի ժողովուրդն է նրան պարտ մնում... Եւ երբ այս բոլոր հաշիւների մասին մանրամասն տեղեկութիւններ էինք հաղորդել ձեր լրագրի միջոցով, և տնօրէնութիւն խնդրել ժողովուրդի ցանկութիւնը կատարելու.—մենք վիճակային իշխանութեան կողմից ստացանք կատարեալ լռութիւն, իսկ տեղիս աւագ քահանայ Տէր Յովսէփ Առիւծեանի որդու կողմից, որ Ներսիսեան դպրոցի ե. դասատան մէջն է, կատարեալ հայոյանք և զրպարտութիւն, տեղական միւս հայ լրագրի մէջ, գուցէ մեզ վնասելու մտքով.....Մենք այն ժամանակ լռեցինք, նշանակութիւն չը տալով երիտասարդի զրպարտութիւններին, որովհետև այդ մանուկը գրել էր ոչ իր սեփական համոզմունքով, այլ թելադրված անգիտակցաբար։ Նա պաշտպանում, գովում էր այն երեսփոխանին, որին Սուրամի հայ հասարակութիւնը անհաւատարիմ գտնելով, անպատուութեամբ հեռացրեց, անօգուտ և ապարդիւն համարելով նրա 23 տարվայ գործունէութիւնը.... Երիտասարդի այդ տեսակ վարվունքի համար մենք միայն ցաւում ենք. բայց էլի պատասխանում ենք հետևեալ ժողովրդական առածով. «Ասում են տանուտէրի վրա լոյս իջաւ,—ով տեսաւ.—թէ գլխը...»

Նոյն օրը, ամսիս 4-ին, պ. թեմական վերա-

անում և ոչ ոք իրաւունք չունի իրան բացառութիւն համարել և դրան յարմար վարվել....

Բայց եթէ պէտք է բացառութիւն անել և տօների առիթով փոփոխութիւն մտցնել սովորական կեանքի մէջ, ես ամեն բանից էլի նախադասում եմ ծանօթանալ «Ծննդեան» գրականութեան հետ, մանաւանդ որ աւելի շատ ազատ ժամանակ ունեմ։ Սովորական աշխատանքը ընդմիջվեցաւ և ես էլ իմ ազատութիւն եմ վայելում և օգուտ եմ քաղում ազատ ժամանակից որ կրկին փոքր ինչ հետևեմ վիպասանական և այլ «գեղեցիկ» անուանած գրականութեան, որից շատ յետ եմ մնացել։

Մտնում եմ ուրեմն գրավաճառիս մօտ։ «Պարոն Գ. ինչ նոր բան կայ. ես կը ցանկանայի ինձ մի ընծայ անել ծննդեան տօնի համար, որովհետև ուրիշ կողմից ընծայ չեմ ստանայ։»

Եւ ահա գրավաճառս իր խանութի մի պատից միւս պատ է վազում, և զանազան պահարաններից զանազան նորութիւններ է գիզում իմ առաջ։ Ահա ամերիկացի Սթէնլիի յանդուգն ճանապարհորդութիւն Աֆրիկայի միջով, որ նա անց է կացել Հանդարտ ովկիանոսից մինչև Ատլանտեան ովկիանոսը անթիւ և անասելի դժուարութիւնների հետ պատերազմելով, բայց և պատերազմ վարելով բնիկների հետ. և այդ ճանապարհորդութիւնը նա կատարեց երեք տարվայ միջոցում, սկսեց նրան երիտասարդ և վերջացրեց սպիտակած մազերով։ Այդ ճանապարհորդութիւնը մէնակ չարեց այլ իր հետ ունէր մօտ 150 մարդ բնիկներից և այս բոլորը երկու լրագիրների հաշուով.—ամերիկական «New-York Herald» և Լօնդոնի «Daily Telegraph» լրագիրներն էին, որք պ. Սթէնլիին ահագին միջոցներ տուին, որ նա կատարի այդ յանդուգն գործը և նա կատարեց...և ահա երկու հատոր գիրք, որ պատմում է անասելի և գրեթէ անհաւատալի անցքեր և ապացոյց է տալիս որքան կարող է կատարել մի հաստատ կամք, հռչակվելու ցանկութիւնը և փառասիրութիւնը.—բայց այսպիսի փառասիրութիւնը օգտաւէտ է ամբողջ մարդկութեան համար...

Ահա մի ուրիշ գիրք «Եգիպտոս» վերնագրով։ Հեղինակը Լայպցիգի երևելի պրոֆեսոր Էբէրս է, որի մասնագիտութիւնը հին եգիպտական լեզու է, եգիպտական պատմութիւն, որ հետազոտել է անթիւ արձաններ և արձանագրութիւններ, իսկ վերջին ժամանակներ բացի մասնագիտական շրջաններից այնքան յայտնի եղաւ և ընդհանրապէս ընթերցող հասարակութեան իր րոմաններով հին եգիպտական կեանքից «Եգիպտոսի մի թագաւորի դուստրը» և «Ռաարդա» (Վարդ)։—Սրանց մէջ նա րոմանի ձևը ընտրել է միայն մասնագիտական կրթութիւն չունեցող հասարակութիւնը հին Եգիպտոսի կեանքի հետ ծանօթացնելու դիտաւորութեամբ և շատ յաջողակ կերպով հասել է իր նպատակի.—ընթերցողը լարված ուշադրութեամբ է կարդում Էբէրսի րոմանները և աննկատելի կերպով ծանօթանում է ամենահին քաղաքակրթութեան ազգի հետ, ծանօթանում է աննկատելի կերպով և դիտութեան ամենանոր հետազօտութիւնների հետ։ «Եգիպտոս» իր գրվածքի մէջ նա ճանապարհորդական ձև է ընտրել և պատմում է երկրի անցեալը և նրա վիճակի փոփոխութիւնները զանազան քաղաքակրթիչ տարրերի ազդեցութեան տակ հին եգիպտացիք, Ալէքսանդր Մակեդոնացու ժառանգները, Հռոմ, Արաբներ, Մահմետականութիւն անցնում են մեր աչքերի առաջ, թողնելով երկրի մէջ իրանց յիշատակներ և այլակերպելով անդադար երկիրը։ Գիրքը շատ գեղեցիկ տիպ ունի և զարդարած է շքեղ պատկերներով, որոնց բնագրերը ամենաերևելի արդեան նկարիչների գործարաններից են ծագում —դոցա թուումն են Մակարտը, Ռիխտէր, Վէրներ, և այլն։ Առաջինի կլէօպատրա, երկրորդի պատկերները ամենքին յայտնի են։

Բայց ահա և ուրիշ մի գիրք, բանաստեղծութիւններ Դավիթ Ֆրիդրիխ Շտրաուս երևելի փիլիսոփայի և աստուածաբանի, որոնց կարելի եղաւ տպել հեղինակի մահից յետոյ միայն—այսպէս էր նրա կամքը։—Այս բանաստեղծութիւններն յայտնի էին միայն ամենամօտ բարեկամներին և շատերը նրանցից այժմ էլ անտիպ մնացին, որովհետև վերաբերվում են ընտանեկան յարաբերութիւններին այնպիսի անձների, որք դեռ կենդանի են և ուրեմն միայն ժամանակով լոյս կը տեսնեն։ Հասարակութեան անմատչելի են մնում ուրեմն Շտրաուսի ամենագեղեցիկ բանաստեղծութիւնները, եթէ դատենք այն մի քանի օրինակներից ընտանեկան և սիրոյ ոտանաւորներից, որք գտնվում են յիշված ժողովածուի մէջ և որ կրում է համեստ տիտղոս «Poetisches Gedenkbuch» (բանաստեղծական յիշատակարան)։ Որքան հասարակ և սքանչելի է լեզուն, որքան նուրբ զգացմունքներ, որքան սրտաշարժ են այն ոտանաւորները, որք վերաբերվում են փիլիսոփայի սիրոյ և տանջանքների, սրտի կեանքին։ Իսկ առհասարակ Շտրաուսին համարում էին չոր խորհրդաբան, անհաւատ քանդող, անխնայ հերքող—միայն նրա մահից յետոյ բազմութիւնը տեսաւ և ճանաչեց նրա քնքոյշ և զգայուն սիրտը, նրա դժբաղդ սէրը....

Ահա դարձեալ մի այլ գիրք Գուստավ Ֆրայտագի «Նախնիներ» րոմանի հինգերորդ հատորը, «Եղբայրներ» մասնաւոր վերնագրով։ Պատուելի հեղինակը իր այս րոմանի մէջ իրան նպատակ էր դրել գերմանական ազգի կեանքից մի քանի կէտեր վերառնելով ցոյց տալ հետևաբար զարգացումն։ Առաջին հատորի մէջ նկարագրելուց յետոյ գերմանական կեանքը ազգերի տեղափոխութեան (Völkerwanderung) ժամանակից, հետևեալ հատորների մէջ անընդհատ մօտենում էր արդեան ժամանակների, անցնելով քրիստոնէութեան տարածման, աւատական կեանքի կրօնական պատերազմների ժամանակով և հասնում է ներկայ հատորի առաջի մասի մէջ երեսնամեայ պատերազմի, իսկ երկրորդ մասում Ֆրիդրիխ Վիլհելմ I-ի թագաւորութեան ժամանակին։ Հեղինակը իմացել է իր րոմանների շարքում պահպանել ժամանակին յարմար մի ոճ, որ նուրբ և բանաստեղծական է առաջին և երկրորդ հատորների մէջ և աւելի կոչտանում է երբ և կեանքը մի կոչտ, պատերազմական է դառնում, երբ ազգը կրկին վայրենանում է, մի նոր բարբարոսութեան մէջ է ընկնում կրօնական անհամբերութեան և անդադար կրօնական պատերազմների ազդեցութեան տակ...Ամեն մի հատորի մէջ պատմութեան կենտրոնը կազմում է ի հարկէ երկուսի սէր իսկ այդ գլխաւոր գործողութիւնը, որի շուրջ ներկայացրում են այլ մարդիկ և անցքեր որք իսկապէս կարող են համարվել իբրև կողմնակի զարդ, իբրև դեկորացիա գլխաւոր անցքի համար, հեղինակը իմանում է այնքան տարբեր ներկայացնել, յարմարացնել այն ժամանակին որի մէջ պատահում է անցքը, այնպէս որ ընթերցողը, կարդալով Ֆրայտագի րոմանները, ակամայ զգում է, իբր թէ նա է ապրում այն ժամանակի մէջ, երբ կատարվում է պատմած անցքը...Այս նոր հատորը պէտք է անկասկած բռնի մի նշանաւոր տեղ գերմանական արդեան գրականութեան մէջ։

Բայց բաւական է. ես ամբողջ մի պաշարով դուրս եկայ գրավաճառիս մօտից և ցաւեցի միայն որ ֆրանսիական գրականութեան մէջ ոչինչ նոր նշանաւոր բան չէ հրատարակվել վերջին ժամանակներում։ Երբ ես հարցրի դրա մասին «Ալֆոնս Դօդէ նոր բան չէ հրատարակել» եղաւ գրավաճառիս պատասխանը, որով նա ուզեցաւ ցոյց տալ որ Դօդէն է այժմեան ամենանշանաւոր ֆրանսիական րոմանիստը և այս հանգամանքի հետ ես ի հարկէ ստիպվեցայ համաձայնվել։

Ա. Արծրունի

տեսուչը եկել էր այցելութիւն մեր նորակառոյց ուսումնարանին։ Հաւաքելով բոլոր հասարակութիւնը եկեղեցու գաւթում, նա խօսեց ցոյց տալով նրանց ուսումնարանի նիւթական աննախանձելի դրութիւնը և այն աղբիւրները, որոնք պէտք է պահպանեն ուսումնարանի գոյութիւնը։ Մոմավաճառութեան եկամուտը որ մեր ծխական դպրոցների գոյութեան գլխաւոր աղբիւրն է և որ այստեղ, մինչև այժմ, մեծ մասը երեսփոխանի գրպանն էր գնում, ամբողջապէս յայտնի դարձրեց ուսումնարանին. խնդրեց ժողովրդից, որ խանութներում մոմավաճառութիւնը վերջացնեն որոնք բոլորը ուրախութեամբ համաձայնվեցան. իսկ պ. Զիմզեր Զաշիտեանը, որ երկյարկանի քարաշէն ուսումնարանը շինեց իր սեփական հաշուով, խոստացաւ շինել եկեղեցու մոմավաճառութեան համար առանձին քարաշէն խանութ։ Ընտրեց ժողովրդի հաւանութեամբ երեք նոր հոգաբարձուներ, որոնց ձեռին պիտի լինին և մոմավաճառութեան հաշիները։ Առաջարկեց կամաւոր նուիրատուութիւն յօգուտ դպրոցի, բայց որովհետև ժողովուրդը սաստիկ կատաղած էր հին երեսփոխանի վրա, որ մի և նոյն ժամանակ և հոգաբարձու էր, այդ պատճառով հրաժարվեցան ստորագրութենից, սպասելով նոր երեսփոխանի և հոգաբարձուների հաստատութեան։ Պ. վերատեսուչը խրախուսելով ժողովուրդը դէպի ուսումնարանի գործը մեկնեցաւ Թիֆլիս, խոստանալով շուտով կրկին այցելել Քութայիս գնալու ժամանակ, օրիորդաց դպրոցի բացման մասին հոգալու և պ. թեմական վերատեսչի այդ անսպասելի այցելութենից ժողովուրդը բոլորովին զոհ մնաց։ Այսուհետև մեր ուսումնարանը, որի տարեկան եկամուտը 360 ռուբլ էր, կունենայ 1000 ռուբլ, որ չէ արգելում օրիորդաց դպրոցի բացման։

Նոր երեսփոխանի և հոգաբարձուների ընտրութեան վճիռը կայացած է ժողովրդի ստորագրութիւններով և յոյս ունենք որ վիճակային իշխանութիւնը ուշացնելու չէ նրանց հաստատելու։

Նա որ մեր վիճակային իշխանութեան առաջ մեղաւոր էր, այսօր արդարանում է դատարանի, օրէնքի առաջ։

Ալու քահանայ տէր-Դաւիթ Մխիթարեանը, որ վիճակային իշխանութեան հրամանով դադարեցրած է քահանայագործութենից Դաւիթ Զանոյեանցի և իր մի քանի ընկերակիցների խնդրանօք, որոնք բողոքել էին քահանայի անբարոյականութեան և անկանոն գործողութիւնների դէմ, այս օրերս տեղիս հաշտարար դատարանը արդարացնում է բազմաթիւ վկաների ցուցմունքներով տէր Դաւիթին, իսկ պ. Դ. Զանոյեանցին իր ընկերակիցներով երեք չաբաթվայ բանտարկութեան է դատապարտում. այս բողոքող պարոններից մէկը գողութեան մասին կրկին եղել է բանտարկված....50 տուն ժողովրդից բողոքողները 5 տուն են, այն ևս Զանոյեանցի դրդմամբ, մնացած 45 տունը ցանկանում են տէր Դաւիթին։

Այժմ 7—8 գիւղերում, որոնք միմեանցից 10—20 վերստ հեռու են գտանվում, ունեն մի քահանայ այն ևս ծեր. աւելի լաւ չէր լինի որ մեր վիճակային իշխանութիւնը ժամանակաւորապէս մի ուրիշին նշանակէր, մինչև տէր-Դաւիթ ապաշխարութիւնը ?...Երեք ամսվայ սէջ Ալում 2 անգամ պատարագ չէ եղել, ժողովուրդը յաճախում է վրաց եկեղեցի, իսկ մնացած գիւղերին ո՞վ է հարցնում...այնտեղից քահանայի պահանջ էլ է չը կայ...քահանայ չունենալու պատճառով գիւղականները ննջեցեալին իրանք են տարել թաղել... գիտէք անուս ժողովրդի աչքում այսպիսի բաները ինչ նշանակութիւն ունեն և հետևանքը ինչ է լինում...

Մինչդեռ մենք այսպէս անտարբեր ենք վարվում դէպի մեր մանր գործերը, հրէաները իրանց սովորական լուռ խորամանկութեամբ առաջ են տանում վաղուց իրանց ցանկալի միութեան գաղափարը։ Փարիզի իսրայէլեան ընկերութեան ջանքերը ի զուր չեն կորչում. նրա ագենտները այս կողմերում նշանաւոր շարժումներ են գրցում հրէաների մէջ։ Այս տարի բազմաթիւ ունեոր հրէայ ընտանիքներ Ախալցխայից, Ցխինվալից, Կարելից գաղթեցին և գաղթում են այն երկիր, ուր իրանց սուրբ պապերի ոսկորներն են հանգչում, որտեղ ծնվել է աշխարհիս Փրկիչը։ Ամսիս 6-ին հրէաների բազմութիւնը դիմաւորեց գաղթողներին. գնացքը տանում էր Փոթի մի վագոն լի հրէայ ընտանիքներ։ Սուրամի հրէաները, թէ ծերեր և թէ պառաւ կանայք ու երեխաներ վագոնի պատուհանից հասցնում էին նրանց արտասուքով թրջված մոմեր իրանց պապերի գերեզմանների վրա վառելու։ Բոլորեքեան սաստիկ ոգևորված էին. գնացողների հետ միացան և այստեղ բնակվող ախալցխացի ընտանիքներ։ Այս ցանկալի գաղափարի հակապատկերն էր ներկայացնում մի խումբ հայ վանցիների, որոնք քաղցած, ծառաւ, տկլոր յուսահատ կանգնած նայում էին այս ահագին հրէշին— շարժվող գնացքին։ Նրանք ողորմութիւն էին խնդրում իջնողներից։ Այս հպարտ ազգի փոքրիկ խումբը, թողաւ թշնամու ձեռին ամեն բան տուն, տեղ, կին, որդիք։ Թափառում են այս կողմերում միայն իրանց գոյութիւնը պահպանելու—կարծես իրանց հայրենիքում, սեփական կըտուռի տակ, իր ընտանիքում մահը աւելի լաւ չէ, քան թէ այսպիսի կեանքը...։Այս թուշառների մի խումբը Ալէքսանդրապոլում է մնացել։

Վ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 դեկտեմբերի

1872 թուականին Թիֆլիսում եղած օտարականները մի դումար հաւաքեցին ժամանակ անցկացնելու համար։ Այդ դումարը մնացել է ինձ մօտ։ Պ. պ. օտարականները մինչև անգամ մոռացել են դրա գոյութեան մասին։ Այդ դումարի տոկոսի մի մասը, այն է 25 ռուբլ նուիրում եմ յօդուտ Արարատեան ընկերութեան։ Հինգ ռուբլ էլ նուիրում եմ իմ կողմից։

Մկրտիչ Ռուստամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՓՕԹԻՑ մեզ հաղորդում են, որ օրերումս Փօթիի և Բաթումի մէջ ալիքները գցեցին եղերքը «Ռիօն» շոգենաւը։ Շոգենաւը և ապրանքը վնասվեցին, մարդիկ ազատվեցան։ Դեկտեմբերի 15-ին գիշերը մի ուրիշ նաւ ազով բարձած, որ գալիս էր կերչից Փօթիի արևելեան կողմը կործանվեցաւ։ Նաւի վրա գտնվող մարդիկ և ապրանքը ծովը ընկղմվեցան։

—

Մեզ հաղորդում են ԳԱՆԶԱԿԻՑ, որ այնտեղ մի քանի ժամանակ տաք եղանակ էր։ Օրերումս եկել է անձրևախառն ձիւն։ Փողոցները անանցանելի ցեխով են ծածկված։

—

Պարոն Պօղոս Աղամալեանցը ուղարկելով մեզ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ եկող 1879 թ. բաժանորդագին 10 ռուբլ նամակով յայտնում է, որ եթէ պրեմիան ինքը ստանայ նուիրելու է բարեգործական նպատակների համար։ Շատ լաւ. այդ տեսակ բան իւրաքանչիւրի կամքից է կախված։ Սորան ինչ կարող ենք ասել, մանաւանդ երբ դեռ յայտնի չէ թէ ում ընկնելուն պրեմիան։

—

Խնդրում ենք մեր թղթակիցներին բաժանորդագնի հետ չուղարկել յօդուածներ կամ նամակներ, այլ միայն բաժանորդների անունները և ազգանունները մի թերթի վրա նշանակել։ Տպագրելու նամակները կամ յօդուածները աւելի յարմար է ուղարկել թեթև փոստով առանձին։ Այդպիսով նոքա աւելի շուտ կը հասնեն և կը տպվեն։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Temps» լրագրում կարդում ենք հետևեալ տեղեկութիւնը Բերլինի պաշարման դրութեան մասին։

«Պրուսական պատգամաւորների անցեալ օրվայ նստում, ներքին գործերի մինիստրութեան բիւդժէդի մասին վիճելուց յետոյ, առաջադէմ կուսակցութեան գլխաւորների մէկը պ. Վիրխով հարցրեց մինիստրին թէ արդեօք նա տրամադրված է բացատրելու Բերլինի փոքրիկ պաշարման դրութիւնը հրատարակելու պատճառները։

«Ներքին գործերի մինիստր կոմ Էուլենբուրգ պատասխանեց որ եթէ տեղութիւնը այսպէս միջոցների է դիմում, պատճառն այն է որ նա պատգամաւորների ժողովից բաւականացուցիչ բացատրութիւններ չը ստացաւ իր հրատարակած օրէնքի 28-որդ յօդուածի մասին, որի գործադրութիւնը, ինչպէս դուք էլ դիտէք, ուղղված է ռամկասոցիալիստների դէմ։ Կառավարութիւնը մտադիր է դրա մասին հարկ եղած բացատրութիւնները տալ բայիստագին, և ես պատրաստ եմ հաղորդել պատգամաւորների ժողովին այն բացատրութիւնները, որ նա պահանջում է։

«28-որդ յօդուածի մէջ ասված է, որ պաշարման դրութիւն պէտք է հրատարակել այն տեղերում, որտեղ ժողովրդական խաղաղութեանը սպառնում են ռամկասոցիալական ձգտումները։

«Կառավարութիւնը առհասարակ աշխատում է ոչնչացնել կոմունիստների և սոցիալիստների այն ջանքերը, որոնք ձգտում են կործանել արդէն հաստատված քաղաքական և հասարակական կարգերն ու կանոնները։ Ճշմարիտ է որ այս րոպէիս մի այդպիսի ակնյայտնի շարժում չէ երևում, բայց համաձայնեցէք, որ դա գաղտնի կերպով մեքենայվում է, և մի ընդհանուր վտանգ ստիպում է կառավարութեան ազդու միջոցների դիմել։ Այս րոպէին Բերլինում հաւաքված են մեծ բազմութիւն սոցիալիստների և զանազան կուսակցութեան գլխաւորներ։ Բացի այս Բերլինում սոցիալական բազմաթիւ ժողովներ և զանազան ցուցմունքներ են լինում, որոնց նպատակն է մի կենարօն հիմնել նոյն իսկ Բերլինում, և յետոյ հեռագրեամբ լայնացնել իրանց գործողութեան շրջանը։ Նոր օրէնքի հրատարակութեամբ կառավարութիւնը յոյս ունէր, որ սոցիալականները խաղաղութեամբ կը հպատակէին, բայց, ընդհակառակը, նա նկատեց, որ այդ շատ ու քիչ յայտնի ցուցմունքները աւելի ևս վտանգաւոր կերպարանք ստացան. նրանք այժմ սկսեցին գաղտնի ընկերութիւններ և գաղտնի պրօպագանդ տարածել, այդ բաւական չէր, նրանք սկսեցին օտար երկրներից յեղափոխական լրագիրներ բերել տալ, որոնք արդէն բռնում են այն լրագիրների տեղը, որոնց մենք արգելում ենք։ Վերջապէս մենք համոզվեցանք, որ մեր մինչև այժմ գործ դրած միջոցները անբաւական էին ոչնչացնելու այս չարիքը, որով մենք էլ ստիպվում ենք աւելի ազդու միջոցների դիմել։

«Ճշմարիտ, կարծես հասել է այն ժամը, երբ բոլոր ինքնակալների կեանքը վտանգի է ենթարկված։ Շատ ժամանակ չէ որ մենք ականատես եղանք այդպիսի մի վտանգի Բերլինում, յետոյ Սպանիայի և Իտալիայի դիպուածները յուզեցին ամբողջ Եւրոպան։ Այս դիպուածները մանաւանդ, Իտալիային յայտնի կերպով ցոյց են տալի, որ այդ բանը միայն մի մարդու չարութիւն չէ, այլ դա կամ մի մեծ խմբի դաւանութիւն է, որը ես իրապէս չեմ կարող ապացուցանել, կամ թէ սոցիալականների և միջազգայիններ յանցաւոր գաղափարները այնքան են տարածվել, որ նա այսպիսի քաջագործութեան արդիւնքներ է ցոյց տալի։

«Այս րոպէիս նոյն իսկ Բերլինում կան անհաւաներ և միջազգայիններ, որոնք սոցիալական շարժման գլխաւորների հետ շարունակ յարաբերութիւններ ունեն։ Այս բոլոր շարժումները ոչնչացնելու համար, կառավարութիւնը հրամայեց, առաջին որ ամեն կասկածաւոր մարդոց հեռացնեն այն տեղերից, ուր նրանք այդպիսի չարամտութիւններ են մեքենայում, և երկրորդ արգելել է որ քաղաքացիք իրաւունք ունենան զէնք կրելու։ Այս միջոցներով կառավարութիւնը կամենում է միայն փակել յանցանքների ուսումնարանը։ Այս ուսումնարանը փակված չէ համարում, քանի որ դրա ուսուցիչների ազդեցութիւնը շարունակվում է. դրա համար էլ կառավարութիւնը կամեցաւ նախ և առաջ հեռացնել ուսուցիչներին, և սրանով հանգցնել այն վտանգաւոր ազդեցութիւնը, որ նրանք ունեցել են ամբոխի վրա։ Կառավարութիւնն ինքն էլ երկրի հետ ափսոսում է, որ ստիպված է այնպիսի միջոցների դիմել. բայց նա չէր կարող այդ չանել ժողովրդի անդորրութիւնը և քաղաքի մէջ կարգ ու կանոն պահպանելու համար, և վերջապէս մի կեանքի տապահովութեան համար, որը մեզ ամենքիս էլ սիրելի է, և որը դարձեալ ժողովրդին է հաւատացած։ (Աջ կողմից հաւանութեան ձայներ են լսվում։)

«Պ. Վիրխովը շնորհակալութիւն արաւ մինիստրին նրա վեհանձն և անկեղծ բացատրութիւնների համար, բայց և այնպէս նա աւելացրեց, որ Բերլինը դեռ այնպէս փչացած չէ որ արժանի լինի մի այդպիսի օրէնքի գործադրութեանը. սրա ապացոյց, որ նա իր քուէարկութիւնների ժամանակ չընդունեց սոցիալականներին։ Ներկայ ներքին գործերի մինիստրի նախորդն է մեղաւոր, որ թոյլ տուեց սոցիալական ժողովներ կազմեու։ Արքունական ատենադպրի վատ քաղաքականութիւնն է որ այնքան մեծացրեց և այնքան զօրացրեց Բելզէբուբին, որ այժմ նրան յաղթելու համար պաշարման դրութիւն է հարկաւոր։ Ո՞վ է երաշխաւոր, որ դալ տարի էլ կառավարութիւնը մեզ մի և նոյն դրութեան մէջ չի թողնի, և թերևս մենք բնաւ դուրս էլ չը գանք այս դրութենից։

«Պէտք չէ յեղափոխականներին շփոթել թագաւորասպանների հետ։ Մենք ցանկանում ենք, ասաց Վիրխովը, որ փակվի յանցանքի ուսումնարանը, բայց մինչ որ Նոբիլինգի դատաստանական գործերը չը հրատարակվին, ոչ ոք չէ կարող ասել, որ սոցիալականներն են պատասխանատու եղեռնագործութիւններին։

«Վերջացնելով իր խօսքերը, հռետորն ասաց որ աւելի լաւ է միանգամից հալածել բոլոր սոցիալականներին, քան թէ նրանց մի տեղից մի ուրիշ տեղ աքսորել։ Մրցենք սոցիալականների հետ հաւասար զէնքով և կանոնաւոր ճակատամարտով, մենք այսպէսով աւելի կը վաստակենք, քան թէ ներկայ օրէնքի գործադրութեամբ։»

Պ. Լուդվիգ աշխատեց ապացուցանել, որ Գերմանիայի բոլոր այս չարիքի պատճառը իշխան Բիսմարկի քաղաքականութիւնն է։ Նա թողեց Պրուսիայի նախկին բարոյական յաղթութեան քաղաքականութեանը, և հետևեց երկաթի և արիւնի քաղաքականութիւնը։ Այդ քաղաքականութիւնը չը նպաստեց վերականգնելու Գերմանիայի բարոյականութեան ոյժը։ Դրա մասին արքունական ատենադպիրը պատասխանատու է կայսրին և կայսրն էլ Աստուծուն։

«Կոմս Բէթուզի-Հուկը պահպանողականների կողմից հաւանում է կառավարութեան բռնած ընթացքը։

«Պ. Հէնել իր առաջադէմ բարեկամների կողմից բողոքում է այդ ընթացքի դէմ։

«Պ. Լասկերը, որ ազգային ազատամիտ կուսակցութեան գլխաւորներից մէկն է, յայտնեց որ նա հարկաւորութիւն չէ տեսնում հաւանելու այդ ընթացքը։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԱՍՏՐԱԽԱՆ, 21 դեկտեմբերի։ Այստեղ յայտնվեց տիֆի բնաւորութիւն ունեցող մի տարափոխիկ հիւանդութիւն։ Շատ զոհեր են լինում։

ՄՕՍԿՎԱ, 21 դեկտեմբերի։ Ռուսաց ազգային մեծ հանդիսի համար 1880 թ-ի, կը կառուցվի նոր շինութիւն Ցվերսկայա փողոցի ծայրում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 94 ր. 78 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 237 ր. 25 կ., երկրորդ 233 ր. 25 կ., արևելեան առաջին 92 ր. 25 կ., ոսկի 8 ր. 51 կ.։ Լօնդոնի վրա ռուսաց 1 ռուբլ 23,25 պէնս։ Տրամաղրութիւնը ամուր է։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼՍՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՑԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ։

Դվորյանովայեա փողոցի վրա ԱՐԾՐՈՒՆՈՒ ՖԱԼԷՐԵՈՒՄ, «Тифлисскія Объявленія» լրագրի խմբագրատան դիմացը ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍՊԱՐԱՆՔՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են էժան գնով ապակեա (хрустальный) ճենապակեա (фарфоровый) և ֆայանսեա ապրանքներ մի գնով։ Գինու բաժակներ դիւժինը 90 կ.—3 ր., թէյի բաժակներ դիւժ. 1 ր. 30 կ.—7 ր., օղիի բաժակներ 80 կ.—4 ր., չայնիկներ 30 կ.—1 ր. հատը, թէյի թասեր 3 ր.—12 դիւժ., լամպաների ցիլինդրներ 6 կ.—10 կ. հատը, սեղանի սերվիզ 12 հոգու համար 36 ր.—140 ր., թէյ սերվիզ նոյնպէս 12 հոգու համար 9 ր.—45 ր., ՄԻԻՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՆՈՅՆՊԷՍ ԷԺԱՆ ԵՆ ԾԱԽՎՈՒՄ։

4—5

Декабря 17-го, вечеромъ, въ Нѣмецкомъ клубѣ у ОДНОЙ ОСОБЫ потеряны золотые часы подъ № 103,148.

Подъ одной КРЫШЕЮ часовъ находится фотографическая КАРТОЧКА ребенка. Кто найдетъ часы, получитъ 50 руб. ВОЗНАГРОЖДЕНІЕ.

Адресъ спросить въ редакціи газеты „Мшакъ“.

1—5

Լոյս տեսաւ պ. Ցարոյի բրոշիւրը—«ՀԱՑՈՑ ՄԱՄՈՒԼԸ Ռուսաստանում և Կովկասի մէջ»։ Գինն է 30 կօպ.։ Ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։

ՏԷՐ-ՆԻԿՕՂՈՍՈՎԻ խանութում, Կաթոլիչեսկայա փողոցի անկիւնում, Շիրեվի տան հանդէպ ՍՏԱՑՎԱԾ ԵՆ տօների համար ՄԵԾ քանակութեամբ ամենագեղեցիկ ՆՈՐ ձևերի ԲՐԻԼԻԱՆՏԻ, ԱՐԾԱԹԷ և ՈՍԿԵԱՅ իրեղէններ, նոյնպէս ԺԵՆԵՎԱՑԻ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ։ Իսկ այդ խանութի կարգում ՍՏԱՑՎԱԾ Է Կ. Ս. Պոպովի թէյից 5000 ֆունտ թէյի ֆունտը արժէ 1 ր. 40—3 ր.։ Վաճառականներին զիջումն կանվի։

1=4

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковани № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհու կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հասցէն, Սարօկատօլիչեսկայա փողոց, տուն Զիկովանի, № 10

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՊՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻԻԲՏԻԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱԿՈՒ—ԹԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս և գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

21—75

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱՆՈՒ։ Պայմանները մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։

ВЪ РЕДАКЦІИ «МШАКЪ» НУЖЕНЪ РАЗНОЩИКЪ.

Մի դաղիացի ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ դասատուութեան մէջ քսան տարվայ փորձ ունեցող, կամենում է պարապել այդ լեզուի ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ։ Հարցնել պ. Ալբերի մագազինում, Ալէք քսանդրեան այգու դէմ, Գոլովինսկի պրոսպէկտի վրա։

2—5

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ընդունվում է սաորագրութիւն Կ. Պօլսի «Մասիս» լրագրին։ Տարեկան գինն է Ռուսաստանում քսան ռուբլի։ Վճարը կանխիկ։ Սաորագրվել ցանկացողներին խնդրում ենք օր առաջ յայտնել իրանց ցանկութիւնը և որոշ հաղորդել իրանց բնակութեան տեղն և հասցէն։

ՆՈՅՆ ՏԵՂԸ

վաճառվել սկսաւ Եղիշէի Վարդանանց պատմութիւնը Անձևացեաց օրինակից տպագրված ընդ վերոհայեցողութեամբ Գ. Աբքեպ. Այվազեանի։

Գինը ընտիր թղթի վրա . . . . . 1 ր.
Հասարակ թղթի վրա . . . . . 80 կ.

Գումարով գնողներին 20% զիջումն կը լինի։

ԳԻՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

որ գտնվում էր Գոլովինսկի պրոսպէկտի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն Գոլովինսկի պրոսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլիի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցելուների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

16—25

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը՝

	Ր.	Կ.		Ր.	Կ.
1. Տիւզենջեան՝ Տոմարագիտութիւն կազմ. 78 թ.	2	25	ձանապ. ծախ.	2	60
2. Մերենց՝ Թորոս Լևոնի, պատ. վէպ	1	„	—	1	20
3. Խուդաբաշեան բառգիրք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւաթիւ). . .	7	„	—	7	60
4. Ֆրանց Հոֆման՝ Ռընէ, վէպ.	—	40	—	„	50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	„	—	3	40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ	1	„	—	1	20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи.	„ 40		—	„	50

8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, Կ. Պօլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնք։

9. Շուտով կը սկսվի վաճառվել Եղիշէի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձևացեացն օրինակի։ Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազնութիւն Գաբրիէլ Աբքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա։ Հասցէն՝

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію *Тифлисскаго Вѣстника*.

ОБЪ ИЗДАНІИ

ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ

ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близь гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій*,

---

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на 1/2 года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительно принимается въ конторѣ редакцій что въ Галереѣ Арцруни, на Дворцовой улицѣ.

Дозволено Цензурою 22 Декабря 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ